



# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՈՐՈՇՈՒՄ

05 մայիսի 2025 թվականի թիվ 47-Ա

ք. Երևան

### ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին» թիվ 120-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 30-ի թիվ 46-Լ արձանագրային որոշմամբ մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկված թվով 5 թեկնածուներից ստացված համաձայնությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց՝**

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման ժամանակավոր մրցութային հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1. Սամվել Սևադա,
2. Րաֆֆի Մովսիսյան,
3. Էլմիրա Արսենյան,
4. Սեյրան Շահսուվարյան,
5. Գրիգոր Խաչատրյան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՔՅԱՆ

05 մայիսի 2025թ.

ք. Երևան